ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 13

«05» մարտի 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի <<Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին>> ապրիլի 10-ի N 384-Ն որոշման 3-րդ, 4-րդ, 5-րդ կետի գ)ենթակետի, 7-րդ, 11-րդ և 16-րդ կետերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ և նշանակել քաղաքացիական պաշտպանության ծառայության պետեր՝

1) կապի և ազդարարման ծառայություն, ծառայության պետ՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Փոքր Սարիար բնակավայրի վարչական ղեկավար,

2) ինժեներական ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Հաղմիկ բնակավայրի վարչական ղեկավար,

3) բժշկական ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի առաջատար մասնագետ,

4) նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ Կաքավասար բնակավայրի վարչական ղեկավար,

5) տրանսպորտային ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի առաջին կարգի մասնագետ,

6) բույսերի և կենդանիների պաշտապանության ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Վարդաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար,

7) հասարակական կարգի պահպանման ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի առաջին կարգի մասնագետ,

8) 2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունների և պլանների կազմման նպատակով փաստաթղթերի օրինակելի ձևերը տրամադրել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել մեթոդական օգնություն:

3.Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝

1)կազմել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները և պլանները համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ և մինչև <<15>> մարտի 2018թ. ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«05» մարտի 2018 թվական
գյուղ Թորոսգյուղ